

State of California  
Department of Social Services

NOA Msg Doc No. : M44-316C SAR  
Page 1 of 1  
Action : Inform  
Issue : Voluntary Report  
Title : No change/mid-  
period  
Report of  
Property  
Use Form No. : NA 290  
Original Date : 05-01-13 New  
Revision Date : 09-23-13

Auto ID No. :  
Source :  
Issued by : ACL No. 13-80  
Reg Cite : 44-316.3,  
40-181.1(a) (1)

MESSAGE:

Դուք վերջերս Վարչական շրջանին հայտնել եք սեփականության մեջ կատարված փոփոխության մասին:

Որպես կանոն՝ Ձեր զեկուցած սեփականության գումարը Ձեզ անհրավունակ կդարձնեն կանխիկ՝ դրամական օգնության համար: Ըստ կանոնների՝ Վարչական շրջանը Ձեր սեփականությանն անդրադառնում է միայն ամեն վեց ամիսը մեկ: Դա նշանակում է, որ այս անգամ մենք չենք փոխի Ձեր կանխիկ դրամական օգնությունը:

[ ] Ձեր հաջորդ զեկույցը ներկայացվելու է իրավունակության տարեկան վերանայման ժամանակ: Բոլոր տեղեկությունները պետք է հաղորդվեն և հաստատվեն Ձեր SAWS 2 վերանայման ձևի մեջ:

[ ] Ձեր հաջորդ զեկույցը «Կիսամյակային զեկույցն» է (SAR 7)

- Դուք մեզ տրամադրել եք սեփականությունը և դրա արժեքը հաստատող փաստաթղթեր: Ձեզնից չի պահանջվում վերստին զեկուցել այս սեփականության մասին, եթե փոփոխություն չկա:
- Դուք սեփականության մասին զեկուցելիս մեզ չեք տրամադրել այն հաստատող փաստաթղթեր: Դուք պետք է սեփականության մասին զեկուցեք SAR 7 ձևի մեջ և կցեք հաստատող փաստաթղթեր: Եթե այլևս չունեք այդ սեփականությունը, զեկուցեք այդ մասին, և թե ինչ է պատահել սեփականության հետ (վաճառվել է, ծախսվել է և այլն) :

Սեփականության սահմանաչափը \$2,000 է, կամ՝ \$3,250, եթե դրամական հատկացում ստացողների մեջ որևէ մեկը 60 տարեկանից ավելի բարձր տարիքի կամ հաշմանդամ անձ է:

Որպեսզի կանխիկ դրամական օգնության համար իրավունակ մնաք, Դուք պետք է սեփականությունը վաճառեք ընդունելի գնով, այնուհետև փողը ծախսեք, մինչև այն իջնի սեփականության սահմանաչափից, կամ մուտքագրեք սահմանափակ բանկային հաշվին: Դուք չեք կարող այն նվիրաբերել կամ ստանալ ընդունելի գնից ցածր գին:

Սահմանափակ բանկային հաշիվը պաշտպանում է ինսայդությունները կրթության, բնակարանի ձեռքբերման կամ բիզնես սկսելու համար: Դուք պետք է զանգահարեք Ձեր սոցիալական աշխատողին, լրացնեք CalWORKs ծրագրի թղթերը, ստանաք դրանց հաստատումը, այնուհետև հատուկ (առանձին) բանկային հաշիվ բացեք այդ ինսայդությունների համար:

INSTRUCTIONS: Use this notice to inform clients that information reported about property during the semi-annual period has resulted in no change to their benefit amount.